ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2015թ

թիվ 12 Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության << Ընտանեկան օրենսգրքի >> 134, 135-րդ հոդվածներով, <<Քաղաքացիական օրենսգրքի>> 34-րդ, 36-րդ, 37-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշումը, Մանյակ Արգարյանի դիմումը և Ակնաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 01-ի եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 100ա տան բնակիչ՝ Մանյակ Մնացականի Արգարյանին սահմանել խնամակալ իր թոռան ՝ Ականշեն համայնքի թիվ 1 փողոցի 2 տան բնակիչ, 2013 թվականի հունվարի 20-ին ծնված Ալեքս Էմանուիլի Կոշուկովի նկատմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ՝ Միսակ Միսակյան

2016թվական
հունիսի 02
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Թիվ 13

< 10 > Հունիսի 2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի բ) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 20-ի թիվ 35ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման նոր հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ակնաշենի համայնքապետի 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 04ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ՝ Մ.Միսակյան

2016թվական
հունիսի 10
գ.Ակնաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ
2016թվականի ՀՈՒՆԻՍԻ 10-Ի
ԹԻՎ 13Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Նախագահ՝ Միսակ Միսակյան --- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի համայնքապետ

Նախագահի տեղակալ՝ Գոռ Հովհաննիսյան --- Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության, համակարգման վարչության ՏԻՄ-ի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ, ՀՀ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդական

Անդամներ՝

Դավիթ Դավթյան ---- Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետ, ՀՀ քաղաքացիական ծառայության 1-ին դասի խորհրդական

Համլետ Կուրղինյան---Արմավիրի մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, ՀՀ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդական

Գագիկ Խուրշուդյան --- Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու անդամ

Գարիկ Հովհաննիսյան ---Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու անդամ

Սմբատ Զաքարյան---Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Թիվ 14

< 13 > Հունիսի 2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ աշխատակազմի քարտուղարի (1.2-1), երկու առաջատար մասնագետներ (3.1-1), (3.1-2), և առաջին կարգի մասնագետի (3.2-2), երկրորդ կարգի մասնագետի (3.3-1) ատեստավորումն անցկացնել 2016 թվականի հուլիսի 22-ին, ժամը 14:00-ին Ակնաշենի համայնքապետարանում:
2. Ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն անցկացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ՝ Մ.Միսակյան

2016թվական
հունիսի 13
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Թիվ 15

< 13 > Հունիսի 2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երրորդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 2016 թվականի հուլիսի 22-ին Ակնաշենի համայնքապետարանում կայանալիք համայնքային ծառայողների՝ աշխատակազմի քարտուղարի (1.2-1), երկու առաջատար մասնագետներ (3.1-1), (3.1-2), առաջին կարգի մասնագետի (3.2-2), երկրորդ կարգի մասնագետի (3.3-1) ատեստավորման տեխնիկական սպասարկում իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Արմինե Գարիկի Հովհաննիսյանին:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ՝ Մ.Միսակյան

2016թվական
հունիսի 13
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 13 » հունիս 2016 թ. թիվ 16-Ա

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 40 Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի 2016 թվականի վարչական բյուջեում կատարել 10 7 1 -ի 4729 հոդվածի եռամսյակային փոփոխություն :

1/Վարչական բյուջեի 10 7 1 -ի 4729 հոդվածով նախատեսված չորրորդ եռամսյակի պլանը՝685.7/վեց հարյուր ութանասունհինգ հազար յոթ հարյուր/ հազար դրամը տեղափոխել երկրորդ եռամսյակ :
:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ակնաշենի համայնքապետ՝՝ ---------- Մ.Միսակյան

« 13» Հունիս 2016 թվական
գ. Ակնաշեն Ժամը՝ 12⁰⁰

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16. հունիսի 2016թ թիվ 17Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 27-ի թիվ 5 նիստի թիվ 2 որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ակնաշեն համայնքի 024-018 ծածկագրի տանը տնամերձ հողամասով տրամադրել հասցե՝ Հ. Ավետիսյան փողոց 75 տուն:
2. Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ՝ Մ.Միսակյան

2016թվական
հունիսի 16
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

15 հունիսի 2016թ

Թիվ 07

ԽԱՉԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, << Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին կետի Է) ենթակետով.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Խաչիկ Վազգենի Հովակիմյանին 2016 թվականի հունիսի 15-ին գործուղել Արմավիրի մարզպետարան ծառայողական գործերով:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ (Գ. Հարությունյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ակնաշենի համայնքապետ՝ /Մ. Միսակյան/

2016թվական
հունիսի 15
Գ.Ակնաշեն